Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ու Թ Յ Ու Ն
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ, ԿԱՊԻ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼԻ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

♦ ԱՆՈՒՆԸ, ԱԶԳԱՆՈՒՆԸ

Գագիկ Գրիգորյան:

♦ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ:

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Սլովենիայի Հանրապետություն (քաղաք Լյուբլյանա), 2018թ.-ի ապրիլի 25-ից 27-ը:

♦ ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԵՐԸ

Եվրոպական հանձնաժողով, Տրանսպորտի հարցերով ԵՄ հանձնակատար Վիոլետա Բուլչ:

♦ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն Տրանս-Եվրոպական տրանսպորտային ցանցերի օրեր (TEN-T Days) միջոցառմանը:

♦ ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐ

ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գագիկ Գրիգորյանը 2018թ. ապրիլի 25-ից 27-ը Սլովենիայի Հանրապետության Լյուբլյանա քաղաքում մասնակցել է «Կապակցելով Եվրոպան» խորագրով «Տրանս-Եվրոպական տրանսպորտային ցանցերի օրեր» (TEN-T Days) միջոցառմանը:

Սույն միջոցառումը համարվում է ԵՄ տրանսպորտային կապակցվածության կարևորագույն իրադարձություններից մեկը, որը այս տարի այն անց էր կացվում Եվրոպական Միության Խորհրդում Բուլղարիայի նախագահության շրջանակներում:

Եռօրյա միջոցառման ընթացքում քննարկվել են այնպիսի հարցեր, ինչպիսիք են կայուն և անվտանգ շարժունակությունը, շարժունակության դերը և ապագան տրանսպորտի ոլորտում, արդյունավետ տրանսպորտային համակարգի ստեղծումը, տրանսպորտային համակարգի թվայնացումը, քաղաքային տրանսպորտի զարգացումը, նորարար, կանաչ և անվտանգ ենթակառուցվածքների դերը տրանսպորտի զարգացման և խթանման գործում, մուլտիմոդալ փոխադրումների, երկաթուղային տրանսպորտի կառավարման համակարգի ստեղծման, ծովային տրանսպորտի հետ կապված հիմնահարցեր, ինչպես նաև ճանապարհային անվտանգության հետ կապված մի շարք հարցեր:

«Տրանս-Եվրոպական տրանսպորտային ցանցերի օրեր» 2018-ի պաշտոնական բացման արարողությանը ելույթով է հանդես եկել Սլովենիայի վարչապետ Միրո Ցերարը:

Նիստի քննարկման առարկայական և առաջնային թեմաներից էին նորարար, մաքուր, կանաչ և խելացի տրանսպորտային շարժունակության կառուցումը, արտանետումների քանակի կրճատումը և անվտանգ երթևեկության ապահովումը: Այս գաղափարի իրականացման համար կողմերը դիտարկել են այսպես կոչված «Զրո»-ի գաղափարը, որն իր մեջ ներառում է երեք կետեր՝ «զրո մահվան դեպքեր», «զրո արտանետումներ» և «զրո թուղթ»: Պայմանավորվածություն ձեռք բերվեց նշված գաղափարը կյանքի կոչելու նպատակով փնտրել և գտնել նոր լուծումներ, էներգիայի այլընտրանքային աղբյուրներ, անցնել մաքուր և արտանետումներ չառաջացնող փոխադրամիջոցների կիրառման, հետևել քաղաքներում, գյուղերում և այլ խոշոր միջանցքներում անվտանգ երթևեկության կազմակերպման իրականացմանը: Կարևորվեց նաև նշված գործընթացում ԵՄ և ԱրլԳ անդամ-երկրների ակտիվ մասնակցությունը, ինչպես նաև ներդրումների և ստարտափների ներգրավման հնարավորությունները:

Միջոցառման շրջանակներում 2018թ. ապրիլի 27-ին տեղի է ունեցել Արևելյան Գործընկերության երկրների նախարարական նիստ, որի ընթացքում քննարկվել են ԵՄ և Արևելյան Գործընկերության երկրների տրանսպորտային համակարգերի ինտեգրման համար ապագա ֆինանսավորման հնարավորությունները:

Նիստում քննարկվել են Արևելյան գործընկերության երկրների առաջնային ենթակառուցվածքային ծրագրերը, տրանսպորտային հասանելիությունը եվրոպական ցանցին, տրանսպորտային ցանցի զարգացմանն ուղղված ներդրումային հնարավորությունները:

Նիստի ընթացքում ԵՀ հարևանության և ընդլայնման հարցերով գլխավոր տնօրինության կողմից ներկայացվել է ԵՄ Ներդրումային գործողությունների ծրագիրի նախագիծը՝ որպես Արևելյան գործընկերության անդամ-երկրների տրանսպորտային համակարգերի զարգացման և արդիականացման հիմնական գործիք: Նշյալ նախագծի վերաբերյալ առաջարկություններ և նկատառումներ են հնչել մասնակիցների կողմից և պայմանավորվածություն է ձեռք բերվել երկկողմ հանդիպումներ կազմակերպել DG NEAR-ի և ԱրլԳ. անդամ-երկրների միջև՝ փաստաթուղթը վերջնական տեսքի բերելու նպատակով:

Անդրադարձ է եղել նաև ճանապարհային անվտանգության հետ կապված հարցերին, մասնավորապես, ճանապարհային պատահարների քանակը կրճատելու նպատակով պետությունների կողմից վարվող քաղաքականություններին ու մշակվող օրենսդրություններին:

Նախարարական հանդիպման ընթացքում ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարի առաջին տեղակալ Գագիկ Գրիգորյանը ներկայացրել է ՀՀ տրանսպորտային ենթակառուցվածքային ծրագրերը, ինչպես նաև ֆինանսական աջակցության կարիք ունեցող նոր նախագծեր, որոնք կարող են գրավել ԵՄ ֆինանսական կառույցների ուշադրությունը: Մասնավորապես, անդրադարձել է «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» և Մ6՝ Վանաձոր-Ալավերդի-Վրաստանի սահման միջպետական ավտոճանապարհի հիմնանորոգման ծրագրերի կատարողականին, ինչպես նաև այս ոլորտում

2018-2030թթ. առաջնահերթություն ներկայացնող ծրագրերին՝ Մ2՝ Երևան-Երասխ-Գորիս-Մեղրի-Իրանի սահման և Մ3՝ Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման ծրագրերին:

Ներկայացվեց նաև Հայաստանում իրականցվող «Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք» ներդրումային ծրագրի շրջանակներում պետություն-մասնավոր ձևաչափով համագործակցության հնարավորությունները:

♦ ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Միջոցառման շրջանակներում նախարարի առաջին տեղակալը հանդիպումներ է ունեցել նաև տրանսպորտի ոլորտը ներկայացնող մի շարք նախարարների, Եվրոպական հանձնաժողովի բարձրաստիճան պաշտոնյաների, միջազգային ֆինանսական կառույցների ներկայացուցիչների հետ:

Մասնավորապես, երկկողմ հանդիպում է տեղի ունեցել Տրանսպորտի հարցերով ԵՄ հանձնակատար Վիոլետա Բուլչի և Եվրոպական հանձնաժողովի շարժունակության և տրանսպորտի գծով գլխավոր տնօրեն Հենրիկ Հոլոլեյի հետ, որի ընթացքում քննարկվել են Հայաստանի Հանրապետության ենթակառուցվածքային ծրագրերում համագործակցության ընդլայնման հնարավորություններն ու ֆինանսական կառույցների աջակցության մեխանիզմները:

Առանձին քննարկումներ են եղել նաև ԵՀ հարևանության և ընդլայնման հարցերով գլխավոր տնօրինության Հայաստանի, Ադրբեջանի, Բելառուսի և Արևելյան գործընկերության հարցերով բաժնի ղեկավար (DG NEAR) Վասիլիս Մարագոսի, Համաշխարհային բանկի ներկայացուցիչ Սիմոն Դավիդ Էլիսի և ԵՀ շարժունակության և տրանսպորտի գլխավոր տնօրինության միջազգային տրանսպորտի բաժնի ղեկավար Ալան Բարոնի հետ՝ Տրանս-Եվրոպական տրանսպորտային ցանցում ընդգրկված ՀՀ առաջնային և նախատեսվող ծրագրերի, ինչպես նաև այդ ծրագրերի շրջանակներում Համաշխարհային բանկի կողմից կատարված ուսումնասիրության վերաբերյալ:

♦ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Նախարարական նիստի արդյունքում լրամշակվել և վերջնական տեսքի է բերվել ճանապարհային անվտանգության վերաբերյալ Հռչակագրի նախագիծը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ բելառուսական կողմը պատրաստ չէր հռչակագրի ստորագրմանը, որոշում է կայացվել ստորագրման արարողությունը ընդգրկել հաջորդ նիստի օրակարգում:

♦ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գագիկ Գրիգորյան
05.05.2018թ.